# Ազգ
Azg

13 ՅՈՒՆԻՍ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 106(4958)

ISSN: 1829-1651
9 771829 165003 12106


## Մեծ պայթյունից առաջ տիեզերքի գոյության ապացույցներ

### *Պենրոուզի եւ Գուրզադյանի հայտնագործությունը*

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր **Ռոջեր Պենրոուզը** եւ հայ աստղագետ **Վահագն Գուրզադյանը** պնդում են, որ գտել են այսպես կոչված գոյության ապացույցներ: Գիտնականներն այդ պայթյունը համարում էին իրարից հեռացող գալակտիկաների համակարգը գոյացրած պայմանական իրադարձություն, գրում է «Դեյլի մեյլ» թերթը:

Գիտնականների հետեւություններն արված են տիեզերքի ճառագայթային ֆոնի ուսումնասիրության հիման վրա: 2001-ին արձակված հատուկ WMAP զոնդը վերլուծում է Մեծ պայթյունի «արձագանքը»՝ միկրոալիքային ֆոնային տիեզերական ճառագայթումը (մնացուկային ճառագայթում): Ըստ այդմ 3 տարի առաջ WMAP-ը տիեզերքի տարիքը գնահատեց 13,7 միլիարդ տարի:

Պենրոուզի եւ Գուրզադյանի խոսքերով, իրենց հաջողվել է գտնել համակենտրոն շրջանների 12 օրինակ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է ինտենսիվ ճառագայթման 5 օղակից: Նման օղակներ առաջանում են գալակտիկաների խմբերի շուրջը եւ ցույց տալիս տիեզերքի սեղմման եւ ընդարձակման իրարահաջորդ պրոցեսները:



Պենրոուզի «ցիկլային կոսմոլոգիայի» տեսության համաձայն, տիեզերքի պատմությունը շատ ավելի հին է, քան ենթադրվում էր: Փաստորեն այն կազմված է հերթափոխվող իրադարձությունների շղթայից. սկզբում գերզանգվածեղ «սեւ անցքը» կլանում է տիեզերքը, կուտակելով վիթխարի էներգիա, ապա տեղի է ունենում նոր Մեծ պայթյուն:

Հայտնաբերված գրավիտացիոն ռադիացիոն ալիքները, գիտնականների կարծիքով, վկայում են, որ անցյալում եղել են այդ գերզանգվածեղ «սեւ անցքերը», որոնք «սպանում են» տիեզերքը, ապա պայթելով՝ հանգեցնում են գալակտիկաների նոր համակարգի առաջացմանը:

## Հավասարության իռլանդական նշանը

### *Միջադեպերի հետաքննության մեխանիզմ չի մշակվի, քանի դեռ Ադրբեջանը «հա» ու «չէ» է անում*




Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուժի կիրառման անթույլատրելիության մասին հայտարարում, ապա սեփական հայտարարությունները վերահաստատում են հակամարտություններին այս կամ այն կերպ առնչվող գրեթե բոլոր կառույցները, սակայն վերահաստատումների ֆոնին ուժի կիրառման «գայթակղությանը» չդիմացող Ադրբեջանին ուղղված հստակ բնորոշումներ ու գնահատականներ այդպես էլ չեն հնչում, ավելին, հավասարության նշանը մնում է այն հիմնական մոտեցումը, որի հետեւում ամենայն հանգստությամբ թաքնվում են բոլոր պատասխանատու եւ ուղղակի առնչություն ունեցող կառույցները:

Հերթական անգամ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն այլընտրանք չլինելու մասին երեկ Երեւանում հայտարարել է տարածաշրջանային այցով Հայաստան այցելած ԵԱՀԿ գործող նախագահի, Իռլանդիայի փոխվարչապետ, ԱԳ նախարար Էյմոն Գիլմորը Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ ասուլիսում:

Վերջին օրերի միջադեպերի առնչությամբ էլ հակամարտության կարգավորման իռլանդական փորձը ղարաբաղյանին փոխանցելու պատրաստակամությունն այդպես էլ որոշակի ոչ մի քայլով չդրսեւորած Գիլմորը հայտարարել է, թե կողմերը պետք է ձեռնպահ մնան ինչպես ուժի ու դրա սպառնալիքի կիրառումից, այնպես էլ պատասխան գործողություններից: Արդեն Հայաստանի ԱԳ նախարարի խոսքերով՝ Հայաստանը կողմ է եղել եւ մնում այս մեխանիզմի ստեղծմանը: Նալբանդյանի հիշեցմամբ՝ մեխանիզմի ստեղծման վերաբերյալ համապատասխան դրույթներ են պարունակվում համապատասխան հայտարարությունների մեջ, որոնք արել են Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահները Սոչիում՝ 2011 թ. մարտին եւ 2012 թ. հունվարին:

*Տես էջ 3*

## Վրաստանի ԱԳՆ-ն մեկնաբանում է, նախագահի խոսնակը՝ ոչ

**Վրաստանի նախագահի աշխատակազմը ձեռնպահ է մնում Լեռնային Ղարաբաղի առնչությամբ վերջին իրադարձությունները մեկնաբանելուց: Այսպիսի հայտարարություն է արել Վրաստանի նախագահի մամուլի խոսնակ Մանանա Մանջղալաձեն հերթական ճեպազրույցի ժամանակ:**

**«Գրուզիա օնլայն» կայքէջի տեղեկացմամբ՝ Սաակաշվիլու մամուլի խոսնակը հայտարարել է, որ պարբերաբար տեղեկություններ են ստանում «ԼՂ-ում իրադարձությունների առնչությամբ, սակայն այս փուլում մենք ձեռնպահ կմնանք մեկնաբանություններից»:**

**Հիշեցնենք, որ Վրաստանի արտգործնախարարությունում, սակայն, ձեռնպահ չէին մնացել մեկնաբանություններից, ավելին, մեկնաբանություններն արվել են այնպիսի ձեւակերպումներով, որոնք չեն համապատասխանում ղարաբաղյան հակամարտության ընդունված մոտեցումներին: Վրաստանի նախագահի աշխատակազմի դեպքում էլ, ճիշտ է, ներկայացվել է, թե տեղեկություններ ստանում են, սակայն Սաակաշվիլու մամուլի խոսնակը մոռացել է նշել, որ ադրբեջանական դիվերսիաներ են իրականացվել նախ Հայաստանի նկատմամբ, այլ ոչ թե միայն Լեռնային Ղարաբաղի ուղղությամբ:**

**Ամեն դեպքում, առավել զավեշտալի է, որ վրացական աղբյուրները, ադրբեջանական մամուլին հղում անելով, տարածել են «հիշեցում», թե «ադրբեջանցի զինվորականները Լեռնային Ղարաբաղում երկու գյուղ են զբաղեցրել», ասել է թե՝ վերցրել հսկողության տակ:**

**Այո, միշտ չէ, որ ցանկություններն ու իրողությունները համընկնում են, հատկապես երբ խոսքը ադրբեջանական «պանծալի բանակի» «ցնցող հաջողությունների» մասին է:**

Ա. Հ.

## Ադրբեջանցի հակերները կոտրել են Մանկավարժականի կայքէջը

**Հայկական պետական մանկավարժական համալսարանի պաշտոնական կայքէջը www.armspu.am-ը ադրբեջանցի հակերները կոտրել են, եւ համալսարանի ուսանողները չեն կարողացել օգտվել կայքէջից: Համալսարանի կայքէջը հարձակման է ենթարկվել հունիսի 9-ին, երբ կայքի «Նորություններ» բաժնում տեղադրել են տեղեկատվություն, համաձայն որի՝ բանասիրական ֆակուլտետը մեկ րոպե լռությամբ հարգել է հայ-ադրբեջանական սահմանում վերջին դիվերսիոն գործողություններից զոհված հայ երիտասարդների հիշատակը: Որ կայքը ջարդել են ադրբեջանցի հակերները, համալսարանի ղեկավարությանն ու կայքի պատասխանատուներին տեղեկացրել է «Արմինկո» ընկերությունը: Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, երբ համալսարանի կայքէջը հակերական հարձակման է ենթարկվում: Ապրիլի 24-ին կայքը կրկին ենթարկվել է հարձակման, երբ տեղադրվել էր հոդված, որը պատմում էր դեպի Հայոց ցեղասպանության հուշահամալիր կազմակերպված երթի մասին, որին մասնակցել են նաեւ համալսարանի ուսանողները՝ պահանջելով ճանաչում եւ հատուցում:**

Հ. Հ.

## «Բրյուսովը» նոր ռեկտոր ունի, սակայն կրքերը չեն հանդարտվում

22 «կողմ», 1 «անվավեր» արդյունքներով Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր ընտրվեց մինչ այդ ռեկտորի պաշտոնակատար Գայանե Գասպարյանը: «Поздравляем», «Поздравляем»: Հենց այս բացականչություններով, ծափահարություններով ու կարմիր վարդերով մի քանի տասնյակ կին դասախոսներ շենքից դուրս եկող նորընտիր ռեկտորին դիմավորեցին, ողջագուրվեցին ու նվիրեցին ծաղկեփնջերը՝ ստանալով հրաշալի շոուի կատարյալ ավարտ: Գասպարյանը երջանիկ էր, հուզված, թեպետ նոր պաշտոնը չպետք է անակնկալ լիներ իր համար, որովհետեւ խնդրի սկզբից էլ արդեն հայտնի էր, որ նա է զբաղեցնելու ռեկտորի պաշտոնը:

Գասպարյանի ներկայացմամբ՝ ինքը դրածո չէ, ունի հստակ կանոններ, դիրքորոշում եւ բուհի զարգացման ծրագիր է ներկայացնելու:

Գասպարյանին շարունակում է դրածո համարել Բրյուսովի նախկին ռեկտոր Սուրեն Զոլյանը, որն այսօր մամուլի ասուլիս է հրավիրելու եւ խոսելու ռեկտորի ընտրությունների մասին:

Ի դեպ, բուհում դեռեւս շարունակում է պառակտումը: Երբ ընտրված ռեկտորի կողմնակիցները՝ գասպարյանականները, տոնում էին հաղթանակը, զոլյանականների կողմնակիցները՝ «Ազատ ուսանողների ֆորումի» անդամները, պատրաստվում էին արհամարհանքի պիկետ անցկացնել ընդդեմ նորանշանակ ռեկտորի: Նրանք հանդես են գալու բուհի ռեկտորի ընտրությունների ոչ լեգիտիմության մասին հայտարարությամբ:

Հ. Հ.

## Օսկանյանին լրջորեն ուզում են մեղադրել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՅԱՆ

Հավանաբար ԱԱԾ երեկվա հայտարարությունը հապճեպ արձագանքն է մեկ օր առաջ Վարդան Օսկանյանի տարածած հայտարարության, այլապես այդպիսի շտապողականության խնդիր չէր առաջանա՝ պարզաբանում առանձնապես խոշոր չափերի հարկային չարաշահումների եւ այդ առթիվ հարուցված քրեական գործի մասին: Այ, այ, այ... Օսկանյանը, փաստորեն, մեր օլիգարխներին տվեց-անցավ, փող է «լվանում», մինչդեռ մերոնք հակամրցակցային համաձայնությամբ սովորական փող են շինում ընդամենը՝ անմեղ բան, ու մերոնց էլ գերիշխող դիրքի չարաշահման համար միայն մի թեթեւ տուգանում են...

Ուրեմն, ԱԱԾ մամուլի ծառայության հաղորդագրությունից իմանում ենք, որ ԱԱԾ քննչական վարչությունը մայիսի 25-ին քրեական գործ է հարուցել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտներ ստանալու (փողերի լվացում) փաստով: Իրականացվում է նախաքննություն՝ ԱՄՆ-ում գրանցված «Պոլիմեր մատերիալս» եւ «Հանթսման ինթերնեշնլ» կորպորացիաներին պատկանող եւ Հայաստանում հիմնադրված «Հանթսման Բիլդինգ փրոդաքթս» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը շուրջ 2 մլն դոլարով փաստացի վաճառելու, բայց ոչ ճիշտ պայմանագրային ձեւակերպումների արդյունքում գործարքը հարկային մարմին չներկայացնելու, դրանից առաջացող հարկային պարտավորությունները չկատարելու, ամերիկյան կողմի ցանկությամբ Հայաստանում թողնված եւ բացառապես բարեգործության համար նախատեսված այդ գումարից 1 մլն 135 հազ. դոլարը իրականում բարեգործական նպատակներին չուղղելու, չօգտագործելու եւ այդ գումարը «Սիվիլիթասի» նախագահ Վարդան Օսկանյանի եւ նույն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Տիգրան Կարապետյանի անվամբ բացված հաշիվներին փոխանցելու, ինչպես նաեւ գումարների մի մասն անձնական նպատակներով ապօրինի օգտագործելու դեպքերով: Չէ, համաձայնեք, սրանից կարծես լուրջ մեղադրանքի հոտ է գալիս:

*Տես էջ 2*

ԱԶԳ

## Ընթացիկ

# Վրաստանում հայերի հանդեպ բացասական վերաբերմունքը վախից է

*Ֆերնան դը Վարենը հավանական է համարում, որ Չախալյանի գործը ՄԻԵԴ-ում կարող է հանգուցալուծվել Վրաստանի կողմից մարդու իրավունքների խախտման որոշմամբ*

2006-ից, հատկապես նաեւ 2008-ից հետո Վրաստանում շատ անհատներ են խնդիրներ ունենում իշխանությունների կողմից, ընդ որում՝ այդ անհատները ինչպես քաղաքական գործիչներ են, փոքրամասնությունների առաջնորդներ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցների ներկայացուցիչներ, այնպես էլ լրագրողներ, լուսանկարիչներ, որոնց զգալի մասին ներկայացվող հիմնական մեղադրանքը լրտեսությունն է:

Այսպիսին է այսօրվա Վրաստանում տիրող իրավիճակի համատեքստը, որում հարկ է դիտարկել նաեւ ջավախահայ քաղաքական գործիչ, քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի դեպքն ու այդ առնչությամբ արվող քայլերը, որոնցից մեկն էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարան սպասվող դիմումն է, քանի որ վրացական արդարադատության բոլոր ատյաններում սպառվել են արդար դատավարության իրավունքի իրացման կարողությունները եւ հնարավորությունները:

«Երկիր» միության նախաձեռնությամբ Չախալյանի ձերբակալության ու դատավարության քաղաքական-իրավական ասպեկտները ներկայացնող «Ազգային փոքրամասնություն լինելու վտանգները. Մարդու իրավունքները եւ Չախալյանն ընդդեմ Վրաստանի» զեկույցի հեղինակ, միջազգային փորձագետ Ֆերնան դը Վարենը երեկ «Հենարան» ակումբում վերը նշվածով ներկայացրեց զեկույցի պատրաստման համատեքստը:

Նրա ներկայացմամբ՝ Վրաստանում անգամ կան դեպքեր, երբ մարդկանց մեղադրանքներ են առաջադրել Եվրոպայի խորհրդի՝ փոքրամասնությունների իրավունքների հարցերով զբաղվող ներկայացուցիչների հետ հանդիպումների համար: Ասել է թե՝ Չախալյանի դեպքը նման մի երկրում հատկապես պետք է ուշադրության արժանանար, հատկապես որ փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների մաս են կազմում, իսկ արդար դատավարության իրավունքն ընդհանրապես ունի մեծ կարեւորություն:

Այս իրավունքի խախտումն ընդհանրապես գնահատվում է 7 ասպեկտներով, ընդ որում՝ մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գործերով լինում են այդ ասպեկտներից 1-2-ը այն դեպքում, երբ ըստ մարդու իրավունքների փորձագետի՝ Չախալյանի դատավարության պարագայում առկա է 7-ից 4-ը՝ իրեն պաշտպանելու մեղադրյալի իրավունք, իրավունք դատարանում հարցաքննելու վկաներին, ունենալու իրավական խորհրդատու՝ սեփական ընտրությամբ, եւ ունենալու թարգմանիչ:

**«Ազգը»** Չախալյանի ողջ դատավարության ընթացքում ներկայացրել է այն բազմաթիվ խախտումները, որ իրականացվում էին վրացական արդարադատությունը ներկայացնող անձանց կողմից, ուստի համամիտ ենք, որ ՄԻԵԴ-ում Չախալյանի գործով մեծ է հավանականությունը, որ Վրաստանը կճանաչվի խախտում իրականացնող ու կարող է փոխհատուցում վճարելու պահանջի պարտադրանքի տակ հայտնվել: Ամեն դեպքում, պետությունները, ըստ միջազգային իրավունքի մասնագետի, նախընտրում են միջազգային դատարան չհասցնել գործերը, այլ հարցերը կարգավորել պայմանավորվածությունների տեսքով, ինչն էլ երաշխիք է դատարանի եզրակացության դեպքում իրավիճակի որոշ փոփոխություն ակնկալելու համար:

Առավել կարեւոր է, որ, փորձագետի խոսքերով, Չախալյանի դեպքի՝ ՄԻԵԴ-ում քննությունը լինի եզակի դեպք, որի պարագայում միջազգային դատարանը գուցե քննարկի եւ մեկնաբանի Վրաստանի կառավարության կողմից այդ երկրի փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի իրավունքների հանդեպ վերաբերմունքը: Եվ դա նաեւ փաստված է Ֆերնան դը Վարենի նախկինում պատրաստված մեկ այլ զեկույցով, որը վերաբերում էր փոքրամասնությունների հանդեպ Վրաստանում առկա խտրականությանը:

«Վրաստանում հայերի նկատմամբ բավականին բացասական վերաբերմունք կա, բայց դա չարությունից չէ, այլ՝ վախից: Դուք գիտեք Վրաստանի պատմությունը, ինչը ես էլ գիտեմ», եզրափակեց Ֆերնան դը Վարենը, հավելելով, որ Վրաստանում գրեթե բոլոր ազգային փոքրամասնությունները ունեն խնդիրներ, ունեն խնդիրներ նաեւ կրոնական փոքրամասնությունները, որոնց հարցերին փորձագետը թերեւս անդրադառնա ապագայում:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Հարմարավետ ուսումնական եւ աշխատանքային միջավայր ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի համար

*ՎիվաՍել-ՄՏՍ-ն տեղեկատվական ժամանակակից ռեսուրսներով է ապահովել հերթական բուհին*

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ բուհերին տեղեկատվական ենթակառուցվածքներով ապահովելու ծրագիրը շարունակվում է:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղին ապահովել է ուսումնական գործընթացների պահանջներից բխող արժեքավոր սարքավորումներով. «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակներում գործող 3G երթուղիչով, Wi-Fi անկյունով, ինտերնետ հասանելիությամբ ապահովված՝ 7 համակարգչով լսարանով, փոխանջատիչով եւ լազերային տպիչով:

Տեխնիկապես հագեցված կրթական լաբորատորիան, համացանցի ընձեռած տեղեկատվական հզոր բազան եւ ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակակից մեթոդն այսուհետեւ հասանելի կլինեն նաեւ Հայաստանի հյուսիսարեւելյան տարածաշրջանում գործող այս բուհում:

Նոր տեխնոլոգիաները ենթադրում են ժամանակի տնտեսում, տեղեկացվածության բարձր մակարդակ եւ արագ որոշումներ կայացնելու հմտություն: Պայմաններ, որոնց առկայությամբ երաշխավորվում է հաջողելու հավանականությունը: Մասնագիտացման ճանապարհին ուսանողներին ճիշտ ուղղորդելու առաջին քայլը թերեւս եղած տեղեկատվությունից առավելագույնս ճիշտ եւ արդյունավետ օգտվելու հմտության ուսուցանումն է:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն հավատացած է, որ տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական եւ աշխատանքային միջավայրը նոր խթան կհանդիսանա ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի արդյունավետ գործունեության համար:

# Զուրաբյանական խոստումներ

ՀԱԿ խորհրդարանական խմբակցության ղեկավար Լեւոն Զուրաբյանը խոստանում է իշխանության անխնա քննադատություն խորհրդարանում եւ կոռուպցիայի բացահայտում (վայ-վայ): Թե 7 հոգով ո՞նց են անխնայանալու, պարզ չէ, բայց «Ժառանգության» նախկին 6-ի փորձը վարակիչ է երեւի: Գումարած՝ որ խորհրդարան անցնելը ՀԱԿ-ին այսուհետեւ հնարավորություն է ընձեռում ընտրական հանձնաժողովներում ներկայացված լինելու ու պայքարելու «պետականորեն կազմակերպվող ընտրակեղծարարությունների» դեմ: Բայց նաեւ՝ հանրահավաք են անելու, մոտական էլ՝ հունիսի 26-ին:

ՀԱԿ խմբակցության ղեկավարը ԱԺ նախագահից փորձել է ճշտել, թե ինչո՞ւ է հունիսի վեցին կայանալիք ԵԽԽՎ նստաշրջանին ԱԺ հին պատվիրակությունն ուղարկում, եւ պարզելով, որ դա օրենսդրությանը չի հակասում, նշեց, որ ԱԺ նախագահը պետք է տրամաբանությամբ վարվեր ու նոր պատվիրակություն կազմեր, որը կարտացոլեր նոր ընտրություններով գրանցված վիճակը: Մի խոսքով՝ ՀԱԿ-ի ձայնից վախենում են, իր համար եզրակացրել Լ. Զուրաբյանը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը գալու է հունիսի 26-ի հանրահավաքին եւ «լուրջ քաղաքական ելույթ» է ունենալու, եւս մի խոստում տվեց Զուրաբյանը: ՀԱԿ առաջնորդի առողջական վիճակն, ըստ Զուրաբյանի, հատկապես հիմա, այգեգործական սեզոնին է լավ, քանի որ նա շատ լավ այգեգործ է եւ այգին խնամելուց մեծ հաճույք է ստանում:

**Մ. Խ.**

ՕՐԱԽՆԴԻՐ

# Օսկանյանին լրջորեն ուզում են մեղադրել



*1-ին էջից*

**Հայտարարության մեջ ասված է նաեւ, որ «Սիվիլիթաս» հիմնադրամը 2011 թվականի համար ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների, այդ թվում «Պոլիմեր մաստերիալս» եւ «Հանթսման ինթերնեշնլ» կորպորացիաների կողմից բարեգործական նպատակներով հատկացված մոտ 2 մլն դոլարի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացրել:**

**Եվ, ուրեմն, հարկային ստուգումներով, ապրանքագիտական փորձաքննությամբ, հարցաքննություններով եւ այլ քննչական գործողություններով պարզվում են հանգամանքները՝ օբյեկտիվ եւ բազմակողմանի նախաքննություն իրականացնելու համար, հայտնում են ԱԱԾ-ից:**

**Ինչ կարելի է ասել:**

**Նախ արձանագրենք մի քանի փաստ, որոնք աչքի դեմ են գալիս հենց միայն ԱԱԾ տեքստը կարդալիս: Քրեական գործը հարուցվել է մայիսի 25-ին, երբ պարզ դարձավ, որ Հմայակ Հովհաննիսյանը հրաժարվում է ԱԺ մանդատից, Վ. Օսկանյանը՝ ոչ: Երկրորդ՝ 2011 թվականի բացթողումները 2012 թվականին 4-5 ամիս իրավասուները չեն նկատել, ու հանկարծ հետընտրական շրջանում, երբ Օսկանյանը ակտիվորեն իշխանությունների հասցեին շարունակում էր քննադատություն հնչեցնել, ինչպես եւ նախընտրական շրջանում, երբ խորհրդարանի քթի տակ է կառավարության ծրագիրը հաստատելու հարցը, հոպ, Օսկանյանին ծանր մեղադրանքների հեռանկարով հարցաքննում են (արդյո՞ք Տիմոշենկոյի հանդեպ հաջողությամբ իրականացված քրեական հետապնդումը ոգեւորիչ օրինակ կարող է լինել նաեւ մերոնց համար):**

**Մեր վերահսկիչ պալատը միլիոնավոր դրամների ֆինանսական չարաշահումներ է բացահայտում ամեն տարի, սակայն բացահայտվողներին ոչ թե դատախազություն կամ ԱԱԾ են քարշ տալիս, այլ ընդամենը ստիպում են «աշխատանքով, գումարով կամ բարտերով» վերականգնել գողացածը: Ահա այս բոլորից հետո արի ու հավատա «փողերի լվացմանը»: Չնայած՝ մենք կողմ ենք, որ ճշմարտությունը բացահայտվի, եւ ոչ ոք դրան դեմ լինել չի կարող: Սակայն, կարծում ենք, ով՝ ով, ԱԱԾ-ն ամենից լավ գիտի, թե ո՞նց են երկիրը աջուձախից այս խնդիրը շահարկելով ցեխի մեջ մտցնելու: Եվ ամենավերջին, բայց ինչու՝ ամենաառաջին աչքի զարնող հանգամանքը. եթե ԲՀԿ ցուցակի երկրորդ մարդուն այսպիսի մեղադրանքներ են ներկայացնում, ապա ինչո՞ւ չի արտահայտվում ԲՀԿ առաջին մարդը, արդյո՞ք այն պատճառով, որ ոչ հրապարակայնորեն նա իր տեսակետներն այս հարցի հետ կապված արդեն արտահայտել է: Հիշեցնենք, որ ինքը՝ Օսկանյանը, մեկ օր առաջ հայտարարել էր, որ այս ողջ գործընթացի տակ քաղաքական պատվեր է տեսնում: Ու հասարակ մարդու մտքում առաջին զուգահեռը որ ծնվում է՝ ոչ թե այն է, թե վայ, Օսկանյանը փող է կերել ու հարկ չի տվել, այլ այն, որ «դեմը նախագահական ընտրություններ են, ու մի հավակնորդի շարքից հանում են»: Մնում է ենթադրել, թե արդյո՞ք տեղի ունեցողի հետ կապված գլոբալ դիմակայություն չի արձանագրվի (ասենք՝ նույնիսկ Սարգսյան-Քոչարյան մակարդակի), թե՞ բոլորը հանգիստ կնայեն, թե ինչպես են Օսկանյանին հանձնում: Կամ գուցե ավելի հեռուն գնացող գործընթացների մեկնարկ է տրվում...**

Հ. Գ. - Երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը որեւէ քաղաքական ենթատեքստի առկայություն չի տեսել տեղի ունեցողում. «Խոսքն այն մասին է, որ պետք է պարզվեն որոշ հանգամանքներ: Եվ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի համագործակցում է մեր ազգային անվտանգության կառույցների հետ, որպեսզի, եթե կան տեղեկատվություններ, որոնք անհրաժեշտ է ստուգել, որպեսզի ստուգենք եւ վստահ լինենք, որ որեւիցե ռիսկեր այդտեղ չկան: Եվ որեւիցե քաղաքական ենթատեքստ պետք չէ որոնել», «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում ասել է Տիգրան Սարգսյանը:

Երեկ ավելի ուշ հայտարարություն տարածեց նաեւ Վարդան Օսկանյանը, որը նշել էր, թե ԱԱԾ հայտարարությամբ փորձ է արվում ցույց տալ, որ հարուցված քրեական գործը քաղաքական պատվեր չէ. «Կրկնում եմ՝ դա միանշանակ քաղաքական պատվեր է, եւ ուզում եմ ասել հետեւյալը՝ «փողերի լվացում-Օսկանյան-Հանթսման» բառերը մեկ նախադասության մեջ չեն կարող լինել:

Փող լվանալու համար նախ փողը պետք է կեղտոտ լինի: Այս պարագայում փողի աղբյուրները հայտնի են, գնորդն է հայտնի, փողի փոխանցումը ինձ եւ «Սիվիլիթասին» նվիրատուի ցանկությամբ եղել է թափանցիկ եւ բանկի միջոցով: Այդ գործարքում, ըստ իրավաբանների, որեւէ հարկային պարտավորություն չի առաջացել: Իսկ, ըստ պայմանագրի, «Ստացողին փոխանցվելիք գումարները դիտարկվում են որպես նվեր, որը ստացողն իրավունք ունի օգտագործելու իր հայեցողությամբ եւ իր կանոնադրական նպատակների իրականացման համար»:

Միայն քաղաքական նպատակ հետապնդողը կարող է բարի մարդու բարի գործը վերածել քաղաքական մանրադրամի», ավարտել է իր հայտարարությունը Վ. Օսկանյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանում համակարգչային վիրուսների դեմ պայքարի ծրագիր է սկսվելու

*Ըստ «Կասպերսկիի լաբորատորիայի»՝ մեր երկիրը համակարգչային վիրուսներով վարակվելու բարձր ռիսկայնություն ունի*

Կառավարության հաստատմանը վաղը կներկայացվեն համակարգչային վիրուսային վտանգի դեմ արդյունավետ պայքար իրականացնելու միջոցառումների ծրագիրն ու միջոցառումների ժամանակացույցը: Հարցը, որը ներկայացնելու է տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, հրատապ է, նկատի ունենալով տեխնոլոգիական զարգացմանը եւ համակարգչայնացման ընդլայնմանը զուգահեռ կիբեռհանցագործությունների ավելացումը:

Եթե մի քանի տարի առաջ վիրուսների մեծամասնությունը սահմանափակվում էր համակարգչային սկավառակների եւ ծրագրերի աղտոտմամբ, ապա այժմ դրանք փոխել են իրենց բնույթը՝ դառնալով ավելի մեծ սպառնալիք: Մասնավորապես, վնասակիր ծրագրերը գրվում են անօրինական ճանապարհով այլ համակարգիչների օգտագործմամբ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հետեւաբար, անհրաժեշտ է կյանքի կոչել հակավիրուսային պաշտպանության հիմնական քայլերը՝ հուսալի տեղեկատվական համակարգերի ստեղծումը, հակավիրուսային միջոցների եւ նրանց թարմացման գործընթացը, հակավիրուսային միջոցների կիրառմամբ պրոֆիլակտիկ աշխատանքների անցկացումը, հակավիրուսային միջոցների կիրառմամբ էլեկտրոնային փոխանակման անվտանգության ապահովումը եւ այլն:



Այդ նպատակով տրանսպորտի եւ կապի նախարարության ներկայացրած ծրագրով նախատեսվում են իրականացնել հետեւյալ միջոցառումները՝ համակարգչային տնտեսության եւ օպերացիոն համակարգերի առկայության ապահովում, սերվերային տնտեսության առկայության ապահովում (ցանցային սերվերների նվազագույն պահանջվող քանակ, ներխուժման դեմ պաշտպանություն, ներխուժման փորձի եւ չարտոնված ցանցային ակտիվության մասին ահազանգման համակարգ), այլ ակտիվ ցանցային սարքավորումների առկայության ապահովում (երթուղավորիչներ, կառավարվող բաժանարար, ցանցային տպիչ, ցանցային կուտակիչ), ֆիզիկական ցանցի սխեմա (որտեղ եւ ինչպես են անցկացված մալուխները, որտեղ են տեղադրված ակտիվ կամ պասիվ ցանցային սարքերը), որի առկայությունը հնարավորություն է տալիս որոշել տեղեկատվական համակարգի հնարավոր վարակաբեր ուղիները եւ արտադրողականության ու կայունության հնարավոր թույլ կողմերը, տրամաբանական ցանցի սխեմա (սերվերներ, երթուղավորիչներ, ցանցային պահուստներ եւ այլն)՝ գոյություն ունեցող տեխնոլոգիաների միջոցով ինտերնետ ցանցի միացման համար, հուսալի տեղեկատվական համակարգերի ստեղծման համար առաջնահերթությունների սահմանումը (օպերացիոն համակարգի ապահովումը տվյալ պահին արդիական անվտանգության թարմացման համակարգով, թարմացման կենտրոնացված հակավիրուսային ծրագրային ապահովման տեղակայում), կազմակերպության ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության չափորոշիչների սահմանումը, ինտերնետ ցանցի հետ կապված համակարգի գույքագրումը եւ բնորոշումը, ծրագրի իրականացման ժամանակահատվածի եւ միջոցառումների համար անհրաժեշտ ռեսուրսների սահմանումը (սովորաբար հակավիրուսային եւ օպերացիոն համակարգերի թարմացման համակարգի ներդրման համար բավարար ժամկետ է 1-3 շաբաթը), հուսալի տեղեկատվական համակարգերի ապահովման միջոցառումները, սպասարկող անձնակազմի ուսուցումը եւ հավաստագրումը, փաստաթղթերի հասանելիության իրականացման համար անհրաժեշտ ծրագրային եւ սարքավորումների ապահովումը, օպերացիոն համակարգերի վարակման բացառումը կամ նվազագույնի հասցնելը վնասակար եւ լրտեսական ծրագրերով:

Այս ծրագրով հաստատված միջոցառումների ժամանակացույցով նախատեսված միջոցառումները պետք է իրականացնի տրանսպորտի եւ կապի նախարարությունը՝ հանրապետական գործադիր մարմինների տրամադրած տեղեկատվության հիման վրա, վերջիններիս համակարգչային վիրուսային վտանգից ապահովելու նպատակով: Ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվելու են մինչեւ 2013-ի երրորդ եռամսյակ ընկած ժամանակահատվածում: Դրանց ֆինանսավորումը կատարվելու է դոնոր կազմակերպությունների եւ մասնավոր հատվածի տրամադրած միջոցներով:

Ծրագրի համար հիմք են հանդիսացել ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին», վարչապետի հանձնարարականները եւ «Կասպերսկիի լաբորատորիայի» փորձագետների հրապարակած «Հայաստանը ներառվել է համակարգչային վիրուսով վարակվելու բարձր ռիսկայնություն ունեցող երկրների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ» տեղեկատվությունը: Ակնկալվում է, որ ծրագրի իրագործմամբ կբարձրացվեն օգտվողների եւ ցանցային վարիչների համակարգչային գրագիտությունը, համակարգերում տեղեկատվության պաշտպանությունը, կնվազեցվի Հայաստանի Հանրապետությունում համակարգչային վիրուսներով վարակվելու բարձր ռիսկայնությունը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ

# Հայ գյուղը մեռնում է. ահազանգ մտավորականներից

«Փրկենք հայ գյուղը»: Սա կոչ նախաձեռնություն է, որի հեղինակներն են «Շուշի» ՀԿ-ի նախագահ Բակուր Կարապետյանը, սոցիոլոգ Գեւորգ Պողոսյանը, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանը, հրապարակախոս Գրիգոր Ջանիկյանն ու քաղաքագետ Լեւոն Շիրինյանը: Նրանց ուշադրության կենտրոնում հատկապես ԼՂՀ եւ ՀՀ սահմանամերձ բնակավայրերն են: Տարեցտարի գյուղերը դատարկվում են, ամայանում: «Սահմանամերձ գյուղերում մնացել են միայն ծերունիները, որոնք գոյություն են պահպանում արտերկրում աշխատող որդիների ուղարկած միջոցներով», ասում է **Բակուր Կարապետյանը**՝ հավելելով, որ գյուղի փրկության համար անհապաղ քայլեր են անհրաժեշտ: Կարապետյանը հավելում է, որ սահմանամերձ բնակավայրերի վերացումը լրջագույն վտանգ է տնտեսական շրջափակման մեջ գտնվող ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի համար: Կարապետյանը համոզված է, որ միայն համաչափ զարգացող երկիրը կարող է լիարժեք տնտեսություն, ուժեղ բանակ, ունակ հասարակություն եւ խելամիտ իշխանություն ունենալ: Ցավոք, հայկական երկու հանրապետությունների կառավարությունների ուշադրության կենտրոնում մայրաքաղաքներն են: Երեւանում եւ Ստեփանակերտում են կենտրոնացած արտադրական միջոցները, ֆինանսները, մշակույթը: Կարապետյանի ներկայացմամբ՝ այդ կուտակումն իր հետ բերում է բազմաթիվ բացասական երեւույթներ: Նկատվում է հասարակության բարոյահոգեւոր անկումը, ինչը խիստ վտանգավոր է հատկապես պատերազմական վիճակում գտնվող երկրի համար:

«Ուրբաթ» ակումբում սոցիոլոգ **Գեւորգ Պողոսյանը** հիշում է հայտնի ասույթը՝ «Գյուղը քաղաք է պահում»: Ցավոք, այսօր ասույթը չի համապատասխանում իրականությանը, քանի որ հայկական գյուղը մեռնում է: Սոցիոլոգի գնահատմամբ՝ արտագաղթի հետեւանքով գյուղեր են վերանում: «Հայաստանից տարեկան այնքան մարդ է հեռանում, որ, կարելի է ասել, տարեկան 35 գյուղ է վերանում», ասում է Պողոսյանը՝ հավելելով, որ գյուղացուն պետք է օգնություն ցույց տալ, սակայն գյուղացուն դարձնել ոչ թե «ուզվոր», այլ օգնել իր գործը զարգացնելու:

Սոցիոլոգի գնահատմամբ՝ հասարակության աշխատունակության վրա բացասական են ազդում դրսից եկող նվիրատվություններն ու դրամահավաքները: «Արտերկրում ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն մուրացիկ երկրների համբավ են ձեռք բերել», ասում է Պողոսյանը:

«Փրկենք հայ գյուղը» նախաձեռնող խումբը գյուղի փրկության ծրագիր է մշակել: Նրանք առաջարկում են Սփյուռքի ամեն մի համայնք կապել սահմանամերձ որեւէ բնակավայրի: Տվյալ համայնքը պետք է սահմանամերձ որեւէ բնակավայրում պայմանագրի կետերին համապատասխան համագործակցի եւ, հաշվի առնելով տեղական ռեսուրսները, համապատասխան արտադրություն հիմնի, ինչը կնպաստի գյուղի զարգացմանը: Նրանք վստահ են, որ հաշվի առնելով գյուղում անասնապահության զարգացման ռեսուրսները, կստեղծվեն մսի, կաթի, կաշվի, բրդի, մորթու ընդունման կետեր եւ վերամշակող արտադրություններ: Նախաձեռնող խմբի անդամներն առաջարկում են, որ ներդրող համայնքը լուծի նաեւ արտադրանքը համապատասխան շուկա հանելու խնդիրը: Ծրագիրը մշակելիս նախաձեռնող խմբի անդամները չեն մոռացել նաեւ քրեակատարողական հիմնարկների կալանավորներին: Հասարակության համար լուրջ վտանգ չներկայացնող կալանավորներն իրենց ընտանիքներով սահմանամերձ բնակավայրեր կտեղափոխվեն: Մոտավոր հաշվարկներով՝ նման հիմնարկներում 4 կալանավորներից մեկը հասարակության համար վտանգ չի ներկայացնում: Հ. Հ.

# Հավասարության իռլանդական նշանը

*1-ին էջից*

Միջադեպերի հետաքննության մեխանիզմ մշակելու ու գործարկելու հարցում էլ պաշտոնական Իռլանդիան թերեւս պետք է հաշվի առնի, որ Ադրբեջանի հետ դժվար է պայմանավորվել, քանի որ մի հանդիպմանը ինչ-որ հարցին համաձայնություն տված Ադրբեջանի նախագահը մինչեւ հաջորդ հանդիպում «հիշողության կորուստ» է ունենում՝ բանակցությունների հերթական հանդիպմանը ներկայանալով «առաջարկների նոր փաթեթը թեւատակին»:

Իռլանդացի դիվանագետի՝ դիպուկահարներին շփման գծից դուրս բերելու առնչությամբ հակամարտող կողմերին ուղղված կոչն էլ արդեն զուտ կրկնությունների շարքից է այն պարզ դատողությամբ, որ հայկական կողմը քանիցս դրական պատասխան է տվել դրան, մինչդեռ Ադրբեջանում այդ հարցին նախընտրում են լռությամբ ու արհամարհանքով վերաբերվել:

Ամեն դեպքում, Երեւանում ԵԱՀԿ գործող նախագահը հույս է հայտնել Փարիզում հունիսի 18-ին կայանալիք Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպման առնչությամբ, թեեւ, ամենայն հավանականությամբ՝ այսօրինակ հույսեր կապելը արտգործնախարարական հանդիպման հետ, երբ չեն իրականացվում համանախագահող երկրների նախագահների, Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների մակարդակով արվող հայտարարությունները, մի քիչ անլուրջ է:

## Դավութօղլուի «ռասիստական հոտ»-ով հայտարարության առնչությամբ

Թուրքիայի արտգործնախարարի՝ ադրբեջանցի զինվորների մահվան կապակցությամբ մտահոգություն հայտնելու ու «ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեռնարկած ջանքերին հայկական կողմի անարձագանք վերաբերմունքի» մասին հայտարարությունն էլ Հայաստանի արտգործնախարար Նալբանդյանը մեկնաբանել է այսպես. «Թուրքիայի արտաքին գործերի նախարարի այդ հայտարարությունից, թե իբր ինքը մտահոգված է վերջին միջադեպերի միայն ադրբեջանցի զինվորների կորստից, ռասիստական հոտ է գալիս»:

«Երբեւէ չենք լսել իրենից, որ ինքը մտահոգված լինի ադրբեջանցիների սադրանքներից հայ զինծառայողների սպանություններով», ասել է **Էդվարդ Նալբանդյանը**, ավելացնելով, որ միջազգային հանրության կողմից արյունալի միջադեպերի դատապարտման ու ուժի կիրառումից զերծ մնալու կոչերի կողքին «թուրքական կողմից այս կարգի հայտարարությունները փաստորեն խրախուսում են Ադրբեջանի նոր սադրանքները»:

Հայաստանի արտգործնախարարը շեշտել է, որ երբ Ադրբեջանը ոչ միայն չի արձագանքում, այլ նաեւ մերժում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների՝ դիպուկահարների դուրսբերման, հրադադարի ամրապնդման, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ստեղծման առաջարկները, «թուրքական կողմը փորձում է Ադրբեջանի պատասխանատվությունը բարդել այլոց վրա եւ ձեւացնում է, թե իբր տեղյակ չէ՝ ում պատճառով հնարավոր չեղավ առաջընթաց արձանագրել Կազանում՝ հիմնարար սկզբունքների վերաբերյալ համաձայնության գալու հարցում»:

«20 տարի առաջ, երբ Հայաստանը դեմ չեղավ Մինսկի խմբում Թուրքիայի ներգրավմանը որպես անդամի, որոշ երկրներ ակնկալում էին, որ Թուրքիան անաչառ կլինի եւ կնպաստի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը», ընդգծել է Նալբանդյանը, հավելելով, որ այդ նույն 20 տարիները ցույց են տվել, որ Թուրքիան ոչ միայն անաչառ չէ, ոչ միայն չեզոք չէ, այլ նաեւ իր դիրքորոշմամբ վնաս է հասցնում Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացին: Նալբանդյանի համար հարց է առաջանում. «Արդյոք համատեղելի՞ է Թուրքիայի նմանատիպ կեցվածքը Մինսկի խմբի անդամ լինելու հետ»:

## Գիլմոր-Սահակյան հանդիպում

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը երեկ Երեւանում հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահ Էյմոն Գիլմորի հետ: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման մի շարք հարցեր:

Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ պետք է վերականգնել ԵԱՀԿ Բուդապեշտյան գագաթաժողովում հաստատված բանակցային ձեւաչափը, նշելով, որ առանց ԼՂՀ անմիջական մասնակցության անհնար է հասնել հակամարտության համապարփակ կարգավորման: Ըստ Սահակյանի՝ հիմնախնդրի կարգավորման կարեւոր խոչընդոտներից է Ադրբեջանի վարած ռազմատենչ եւ հակահայկական քաղաքականությունը, որը վերջին ժամանակահատվածում ընդունել է խիստ ծայրահեղական կեցվածք եւ միջազգային հանրության կողմից պետք է արժանանա համապատասխան գնահատականի:

Արցախի Հանրապետության նախագահը կարեւորել է ԵԱՀԿ գործող նախագահի՝ Արցախ այցելելու եւ տեղում երկրին ծանոթանալու անհրաժեշտությունը:

ԱՄԲԻՈՆ

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

# Մեր հոգեբանական որոշ ախտերի մասին

Մեզանում առկա հոգեբանական ախտերը հիմնականում հետեւանք են երկու բանի՝

ա) բնական օրենքներն ու օրինաչափությունները չիմանալու,

բ) մեր ցեղի պատմությանն ու մշակույթին, նրա իրական արժեքներին, առաքինություններին ու թերություններին անծանոթ լինելու, մի խոսքով՝ անցեղաճանաչության:

## Ազգային թերարժեքություն

Այն արդյունք է սեփական արժեքի չգիտակցման, ազգային հպարտության (արժանապատվության) բացակայության, որոնց աղբյուրը ազգային ինքնաճանաչումն է:

Ազգային անլիարժեքությամբ պիտի բացատրել, օրինակ, հայերի՝ միմյանց հետ հայերեն չխոսելը, այլ լեզվով ստորագրելը, օտար անձնանուն կրելը, որեւէ օտարերկրացու կողմից մեր ժողովրդի հասցեին ասված դրական խոսքերով անտեղի ոգեւորվելը եւ այլն: Վերջինիս հետ կապված՝ հետաքրքիր է նկատել Րաֆֆին. «Չեմ կարող չհիշել հայերի այն ընդհանուր մոլությունը, որ սովորական է դարձել եւ մեր գավառներում. տեսնում ես մի տեղ, մի ժողովրդի մեջ, մի խմբի մեջ տասը հայ, իսկ նրանց թվում մի օտարազգի, անպատճառ տասը հոգի հայերը կսկսեն մեկ օտարականի լեզվով խոսել, ինչ ազգից էլ լիներ նա: Չգիտեմ ե՞րբ պետք է հայն ազգային հպարտություն ունենա»:

Ազգային թերարժեքությամբ պիտի բացատրել նաեւ այն հանգամանքը, երբ շատ հայ բանասերներ ու պատմաբաններ անպայմանորեն ձգտում են մեր մշակույթի շատ արժեքներ կապել օտար ազդեցության հետ: Օրինակ՝ հայկական դիցարանը պարսկականից կամ ասորականից փոխառնված համարելը, մեր բառարմատների մեծ մասը օտար իմաստներից բխեցնելը, Հայոց այբուբենի տառերը հին հունականից վերաձեւելը եւ այլն: Սա պիտի բացատրել նաեւ հայ մտավորականության մեծ մասի պարտվողական հոգեբանությամբ, որով տառապողները, առհասարակ, ինչպես Նժդեհը կասեր՝ «խոնարհամիտ են լինում եւ բնազդորեն փախչում այն ամենից, ինչ որ նրանց հիշեցնում է լիարժեք կյանքով, քաջաբար ու փառքով ապրող իրենց նախահայրերին»:

Թերարժեքության յուրատեսակ երեւույթ է Հայաստանի հայերի՝ սին հույսեր կապելը Սփյուռքի մեր հայրենակիցների հետ. թե իբր Սփյուռքը չի թողնի, որ մենք սովից կոտորվենք, նա ռազմական օգնություն ցույց կտա թուրքական հարձակման դեպքում եւ էլի շատ առասպելականացված բաներ:

«Գանգատվել դառնորեն չար բախտից ու մեզանից դուրս որոնել մեր դժբախտությունների պատճառը՝ սա եւս մեր ազգային հոգեբանության բնորոշ գծերից մեկն է», գրում է Հ. Քաջազնունին: Սեփական դառնությունների աղբյուրը իր «ես»-ի մեջ չտեսնելու եւ դրանք իրենից դուրս փնտրելու ինքնախաբեություն-ահա՛ մեզանում իշխող մտայնությունը: Այսպես, 1915թ. հայության սպանդի համար մեղավոր են բոլորը, իսկ որ մենք ընդունակ չեղանք ինքնապաշտպանվելու, անմեղ ենք. 1918-20թթ. Հայաստանի պարտության համար մեղավոր են բոլորը, իսկ որ Կարսում Հայկական բանակն առանց կռվի հանձնվեց թուրք «եղբայրներին», մեղավոր են բոլորը, բացի մեզանից:

Իսկ կյանքի օրենքը պահանջում է՝ սեփական «ես»-ի մեջ տեսնել մեր դժբախտության պատճառները եւ սեփական ոգու մեջ որոնել մեր հզորանքի գաղտնիքը:

Թերարժեքության զգացումի բերած ամենամեծ քաղաքական վնասը՝ օտարահակությունն է, օտարին ապավինելու ստրկամտությունը: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ միջնադարյան Հայաստանում նախարարների ու թագավորների միջեւ փոխադարձ անհաշտ կռիվները, որոնք այնքան վնաս բերին մեր աշխարհին, էապես պայմանավորված էին նրանց տարբեր օտարահակ կողմնորոշումներով: Նույն օտարամետ կողմնորոշումների բախման հետեւանքով տուժեց հայությունը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին:

Այնինչ, քաղաքական իմաստությունն ասում է՝ զինակցի՛ր ուժեղների հետ, օգտագործի՛ր նրանց ուժը, բայց հույսդ դի՛ր սեփական ուժի վրա եւ ցո՛ւյց տուր, որ արժանի զինակից ես:

**ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆ**
**ՀՀԿ նախագահի տեղակալ**

# Չշփոթենք ազատականությունը ամենաթողության հետ

Սույն թվականի հունիսի 3-ին Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կազմակերպությունների միավորիչ համագումարը: Այսինքն տեղի ունեցավ այն, ինչ երկար տարիների ու քրտնաջան աշխատանքի արգասիք է: Գործընթացից տեղյակ մարդիկ շնորհավորում են, մաղթում հետագա հաջողություններ, ուրախանում, որ վերջապես ռամկավարական դաշտը հստակեցվեց: Իսկ շատ մտավորականներ անթաքույց ակնկալիքներով ուղակի «պատվիրաններ» են հնչեցնում, որ մենք՝ հայերս« որքան էլ զգացմունքային ու երազողներ լինենք, այնուամենայնիվ մեզ ամենահոգեհարազատ գաղափարախոսությունը ժողովրդավար-ազատականությունն է: Ուստի դուք՝ ռամկավարներդ, ուղակի պարտավոր եք դառնալ քաղաքական կարեւոր գործոն, հանրապետության կյանքի տարբեր բնագավառներում ձեր ներդրումն ունենալ եւ, ի վերջո, տեր կանգնել այն պատմական ժառանգությանը, որ ավանդել է ձեր շուրջ մեկուկեսդարյա պատմություն ունեցող կուսակցությունը: Եթե մեզանում այսօր կան էլ դեպի աջ ու դեպի ձախ ծայրաբեւեռ գաղափարական դաշտեր դավանողներ, ապա մերօրյա խիստ լարված իրավիճակում դրանք հաստատ քննություն չեն բռնի, որովհետեւ մեր ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերները թելադրում են ավելի հավասարակշռված, զգույշ ու հանդարտաբարո ընթացք: Այնպես է ստացվել, որ բացարձակապես սխալվելու իրավունք չունենք եւ ամեն մի անզգույշ ու անհավասարակշռված քայլ կարող է ճակատագրական լինել:

Վերջին շրջանում շարունակաբար ԶԼՄ-ների տարբեր միջոցներ, միմյանցից առաջնության դափնին խլելու աներեր հաստատակամությամբ քննարկում են «շատ կարեւոր» մի խնդիր՝ միասեռականների ու նրանց նկատմամբ մեր հասարակության վերաբերմունքի «անհետաձգելի ու ազգի ապագան որոշող» հարցը: Հատկապես մերօրյա անվիճելի քարոզչամիջոցի՝ հեռուստատեսության տարբեր ալիքներով կազմակերպվում են հանդիպումներ, հարցազրույցներ եւ նույնիսկ բանավեճի փորձեր: Չենք վիճարկում, խնդիրն իսկապես կա: Համաշխարհային քաղաքակրթության դրականի հետ մեկտեղ մենք ներառվում ենք նաեւ բազմաթիվ բացասական գործառույթների ոլորտներում: Բայց արդյո՞ք հենց այս պահին, երբ մեր սահմաններում կյանքի ծաղկուն տարիքում մարդիկ են զոհվում, արժեր ծավալել այդպիսի քննարկումներ:

Սակայն դրանք կան, եւ ինձ շատ է հուզում խիստ կարեւոր մի հանգամանք: Մեր մի շարք հեռուստահաստատ դեմքեր (ձեւակերպումն իմն է եւ վերաբերում է այն մարդկանց, որոնք, անկախ քննարկվող թեմայից, բարձրացված հարցից, հաղորդման ֆորմատից, միշտ մասնակցում են ու հայտնում «անփոխարինելի եւ անվիճարկելի» տեսակետներ, կարծես մեզանում այլ մտածողներ չկան) այդ տարբեր ձեւաչափերի քննարկումներում հայտնում էին շատ վտանգավոր մի տեսակետ՝ եթե մարդը ժողովրդավար է եւ դավանում է ազատական արժեքներ, ապա չի կարող իր կողքին չհանդուրժել նաեւ միասեռականներին, Եհովայի վկաներին, ֆաշիստներին, մարդասպաններին, որովհետեւ նրանք մեր հասարակության անդամներն են եւ ունեն նույն իրավունքները, ինչը՝ մենք բոլորս:

Այստեղ է, որ ակամա ցանկություն առաջացավ հնչեցնելու հայտնի դարձվածքը՝ «Կանգ առ, ակնթարթ» (ցավոք, այս դեպքում ոչ դրական իմաստով): Սթափվե՛ք, պարոնա՛յք: Մի շփոթեք ազատականությունը ամենաթողության հետ: Դրանք բոլորովին այլ արժեհամակարգեր են: Մեր պայմաններն այնքան շռայլ չեն, որ մենք մեզ թույլ տանք այնպիսի «ազատականություն», որ մեր առանց այն էլ փոքրաթիվ երիտասարդության մի մասը միասեռական դառնա, մի մասը՝ Եհովայի վկա, մի մասն էլ՝ չգիտեմ ինչ զահրումար եւ հրաժարվի հայրենիքին բոլորանվեր ծառայելու սրբազան պարտականությունից: Առավել եւս, եթե թշնամին պարտադրի՝ զենք վերցնելուց: Ուշքի՛ եկեք, պարոնա՛յք մարդասերներ: Միշտ հիշեք, որ նույնիսկ ֆրանսիական մեծ հումանիստները, եվրոպացի ժողովուրդների հոգեւորական դասերի ներկայացուցիչները եւ էլի «հեղափոխական ու աշխարհանորոգիչ» ծրագրերի շատ հեղինակներ, երբ խոսքը վերաբերում էր հայրենիքի գաղափարին, անմիջապես այլ պահվածք էին որդեգրում ու այլ արժեքներով ոգեկոչում իրենց ժողովուրդներին՝ մի ձեռքում ունենալով գիրք, բայց մյուսում՝ անպայման սուր, մի ձեռքում՝ խաչ, մյուսում՝ դարձյալ սուր, եւ այդպես դարեր շարունակ:

Այսօր, 21-րդ դարում, ունենալով բոլոր հնարավորությունները, ֆրանսիացին նույն արժեքով գնում է հայրենի արտադրության «Ռենո» կամ «Պեժո» ավտոմեքենա, սակայն չի գնում իր բոլոր ցուցանիշներով ավելի շահեկան վիճակում գտնվող «Մերսեդես»: Ինչ է սա, ազգայնամոլությո՞ւն: Ո՛չ, սա հենց այն է, ինչ ցանկանում եմ հուշել բոլորիս:

Ես հասկանում եմ, որ ազատական արժեքներ դավանողիս համար մի քիչ կտրուկ եմ, չոր: Բայց ասացեք խնդրեմ, կա՞ մեկը մեզանում, որ իսկապես կցանկանար իր երեխային միասեռական տեսնել: Գիտեմ, նրանց մի մասը իսկապես հիվանդ են: Գիտեմ նաեւ, որ հիվանդներին հարկավոր է մեկուսացնել ու բուժել, ինչպես թոքախտների կամ միավձիավի եւ նման այլ դեպքերում:

Գիտեմ նաեւ, որ մեր հեռուստաէկրաններից շարունակաբար քարոզվում են բացառապես բացասական երեւույթներ: Գիտեմ, որ ամենաշատը մենք այցելում ենք Գագիկ Շամշյանի հեղինակած նյութեր պարունակող կամ նմանատիպ այլ կայքեր: Գիտեմ նաեւ, որ դրանք կատարվում են ոչ պատահաբար: Որեւէ օրվա կտրվածքով նայեք եւ կհամոզվեք՝ բոլոր հեռուստասերիալները քարոզում են բռնություն, դավաճանություն, խաբեություն: Ոչ մի մաքուր, դրական կերպար չկա: Բաց ու կիսաբաց պատուհաններից սուր ու բութ անկյան տակ ներկայացվում է մերօրյա կյանքը՝ եւ ոչ մի դրական անկյուն: Թվում է, թե մեր կյանքն ամբողջովին ախտ է: Բա եղա՞վ: Տարբեր հեռուստաալիքներ հարցազրույցի են հրավիրում Ծոմակին: Ես չգիտեմ՝ դա ծոմակ է, թե ծուղակ, բայց երեք երեխաների հոր դիրքերից վստահեցնում եմ, որ այսօր նրա ու նրա ընկերների կերպարով չէ, որ ոգեւորված իմ երկու տղաները պիտի մեկնեն բանակ՝ հայրենիքին ծառայելու: Ոչ մեկի դեմ անձնապես ոչինչ չունեմ, նույնիսկ չեմ ճանաչում նրանցից ոչ մեկին:

Սակայն այսօր, երբ խոսքը հայրենիքին է վերաբերում եւ նման մի շարք այլ հայրենանվեր արժեքների, լինելով համոզված ազատական ռամկավար, չեմ կարող հանդուրժել, որ բոլոր նրանք, ովքեր ինչ-ինչ պատրվակներով ու պատճառաբանությամբ կհրաժարվեն իրենց ամենավեհ պարտականությունից՝ հայրենիքին ծառայելուց, օգտվեն հայրենիքում գոյություն ունեցող բոլոր իրավունքներից: Հարկավոր է հստակ գիտակցել՝ իրավունքն ու պարտականությունը գտնվում են մեկ ամբողջության մեջ, պայմանավորում են միմյանց ու ապահովում հասարակության հավասարակշիռ գոյությունը:

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ, պգք, դոցենտ**

# Սերն ու հարգանքը գնել հնարավոր չէ



Երեկ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան օրն էր: Այդ առթիվ Կոմիտասի անվան պանթեոն, նրա շիրմին էր այցելել ՀՀԿ վերնախավը՝ նախագահ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ: Հիշատակի տուրքին ներկա էին վարչապետի հարազատները եւ որդին՝ քաղաքապետ Տարոն Մարգարյանը:

Այսօրվա պետական այրերից շատերը երեւի կերազեն, որ իրենց մահից հետո իրենց հիշեն ու հարգեն այնպես, ինչպես որ նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանին են հիշում ու սիրում: Բայց այդ երկու զգացումները ոչ քաղաքական կատեգորիա են, ոչ հնարավոր է պատվիրել, ոչ գնել եւ ոչ էլ հորինել. եթե դրանք կան, ուրեմն այդպես էլ կմնան ժողովրդի հիշողության մեջ: Լրագրողների հետ զրույցում Ա. Մարգարյանի գործընկեր Գալուստ Սահակյանը նշեց, թե նա կարողանում էր համագործակցության գործոն դառնալ, իսկ Մարգարյանի կրտսեր գործընկեր Էդուարդ Շարմազանովը հիշեց, թե նա սովորեցնում էր մարդկանց, բայց ոչ թե պարտադրում էր այդ սովորեցնելը, այլ իր օրինակով էր անում դա. «Համերաշխության կողմնակից էր, եւ իր համար ամենաբարձր արժեքը հայրենիքն ու ազգն էին: Ինքը չէր սիրում քաղաքականության մեջ կտրուկություն, կուսակցամոլություն, չէր ընդունում, երբ կուսակցության շահը կարող էր գերակա լինել պետության շահից: Հայկական հողից եւ էներգետիկայից սնվող հայ մարդ էր, մեր ժողովուրդը նրան այդպես էլ ընդունեց ու գնալով ավելի շատ սիրեց»:

**Ս. Խ.**

# Ֆիքրեթ Սադիխովի «դասերը» Հիլարի Քլինթոնին

ԱՄՆ պետքարտուղարի տարածաշրջանային այցից ավելի քան մեկ շաբաթ է անցել, սակայն հարեւան երկրում դժվարանում են կողմնորոշվել՝ իրենց համար դա դրակա՞ն էր, թե՞ ոչ: Միաժամանակ էլ վարչախումբը թեման «թեժ է պահում»: Հակառակ դեպքում հասարակությունը տպավորություն կունենա, որ ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները ընդհանրապես ձախողվել են: Այս իմաստով հետաքրքրական էր քաղաքագետ Ֆիքրեթ Սադիխովի հարցազրույցը 1news.az-ին: Իբրեւ Քլինթոնի հայտարարություններից «կարեւորագույն», քաղաքագետն առանձնացրել է, որ պետքարտուղարը «հիշել է Հելսինկիի համաձայնագիրը (՞- Վ. Ա.), որն, իհարկե, համապատասխանում է Ադրբեջանի շահերին»:

Միայն այստեղ պարզ չէ՝ Քլինթոնի «հիշե՞լն է Ադրբեջանի շահերին համապատասխանում, թե՞ Հելսինկյան համաձայնագիրը»: Ըստ երեւույթին՝ ոչ մեկը, ոչ մյուսը, քանի որ քիչ հետո Սադիխովն անցնում է Հելսինկյան եզրափակիչ ակտի «մեկնաբանությանը» եւ առանձնացնում, որ այն «իր ժամանակին հռչակել է բոլոր երկրների տարածքային ամբողջականության պահպանման, Եվրոպայում սահմանների անձեռնմխելիության անհրաժեշտությունը, հայտարարել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգումը, բայց՝ այն պետությունների տարածքային ամբողջականության շրջանակներում, որտեղ նրանք ապրում եւ ապրել են: Դա Ադրբեջանի համար շատ կարեւոր է»:

Այս հարցում ադրբեջանական կողմի հետ բանավիճելու առիթներ նախկինում եւս ունեցել ենք: Ուշադրություն դարձնենք, որ Հելսինկյան եզրափակիչ ակտում ինքնորոշման իրավունքը ձեւակերպված է որպես «հավասարության եւ ժողովուրդների՝ իրենց ճակատագիրը տնօրինելու սկզբունք»: Սա ինքնին նշանակում է, որ բոլոր ժողովուրդները իրավահավասար են եւ կարող են ինքնուրույնաբար տնօրինել իրենց ճակատագիրը:

Ընդ որում, Եզրափակիչ ակտում նույն ընդհանուր իմաստը մասնավորապես բացատրված է. «Ելնելով հավասարության եւ ժողովուրդների՝ իրենց ճակատագիրը տնօրինելու սկզբունքից, բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն կատարյալ ազատության պայմաններում, երբ եւ ինչպես իրենք են ցանկանում, որոշելու իրենց ներքին եւ արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց դրսից միջամտության եւ իրենց հայեցողությամբ իրականացնելու սեփական քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ հոգեւոր զարգացումը»:

Ինչպես տեսնում ենք, ոչ մի հղում չկա «ինքնորոշման իրավունքը պետության տարածքային ամբողջականության շրջանակներում իրականացնելու» մասին: Սադիխովի «մեկնաբանության» մեջ, սակայն, մի այլ ակնարկ կա: Նա խոսում է «ժողովուրդների՝ որեւէ պետության տարածքային ամբողջականության շրջանակներում ապրելու կամ ապրած լինելու» մասին: Դա ակնհայտորեն ենթախոսություն է, եւ նկատի է ունենում, որ Եզրափակիչ ակտի համաձայն «Հայաստանի տարածքային ամբողջականության շրջանակներում պետք է նախկինում այնտեղ ապրած ադրբեջանցիներն էլ ինքնորոշվեն»:

Սա, ինչպես ասում են, հին եւ ձանձրալի «երգ» է, որի պատասխանը հետեւյալն է. Բաքվի 207 000 (խորհրդային վերջին՝ 1989 թ. մարդահամարի տվյալներով) հայությունը նույնպես իրավունք ունի վերադառնալու եւ իրացնելու ինքնորոշման իրավունքը, եւ այդ դեպքում Ադրբեջանի մայրաքաղաքը կկիսվի: Էլ չենք խոսում Շամքորի, Խանլարի, Դաշքեսանի, Իսմայիլլիի եւ այլ շրջանների ու առանձին քաղաքների, մասնավորապես Գանձակի, հոծ եւ համահավաք հայ բնակչության մասին, որին ոչ ոք չի կարող զրկել Ադրբեջանի «տարածքում» ինքնորոշվելու իրավունքից:

Բայց դառնանք գլխավորին: Ադրբեջանցի քաղաքագետը, «հիմնավորապես մեկնաբանելով» Հելսինկյան եզրափակիչ ակտը, անցնում է Միացյալ Նահանգների պետքարտուղարից դժգոհություններին: Իհարկե, ԱՄՆ պետքարտուղարության դեմ ակնհայտ հանդես գալու քաջություն նա չունի: Սադիխովը գերադասում է «ափսոսանքի» հնարանքը: Ըստ նրա՝ պետքարտուղարը, խնդրի կարգավորման բացառապես խաղաղ-բանակցային ճանապարհի մասին խոսելիս «նույն հարթության վրա է դնում կողմերին»: Ավելին, նա «կարող էր խոսել ադրբեջանական հողերից «օկուպացիոն զորքերը դուրս բերելու» (չակերտները մերն են - Վ. Ա.) մասին, մինչդեռ ասածներից (Քլինթոնի) տպավորություն է ստեղծվում, թե կողմերը գտնվում են հավասար մակարդակի վրա»:

Ըստ ամենայնի, ադրբեջանական կողմի հիասթափությունը ԱՄՆ պետքարտուղարի այցից բավական մեծ է, եթե վարչախումբն արտոնել է, որ «քաղաքագիտական վերլուծությունների մակարդակով» դա դրսեւորվի: Սա շատ էական է թվում զինադադարի գոտում լարվածության պատճառները գնահատելու հարցում: Ակնհայտ է, որ լարվածություն ստեղծվել է, որպեսզի ԱՄՆ պետքարտուղարը, գտնվելով տարածաշրջանում, կոչ անի «հեռացնել օկուպացիոն զորքերը»: Իսկ երբ դա տեղի չի ունեցել, Բաքվում իշխող վարչախումբն սկսել է «դասեր տալ» Հիլարի Քլինթոնին, թե ինչ եւ ինչպես պիտի ասի: Պետք է սպասել, որ Միացյալ Նահանգների պետքարտուղարությունը բավական կոշտ կարձագանքի ադրբեջանական «դեմարշին», եւ կլինեն նոր բացահայտումներ:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Զահիդ Օրուջեւի «էկզոտիկան»

Չէ, Աստված հաստատ մեզ մշտապես զվարճացնելու համար է ադրբեջանցիներին «հարեւան բերել»: Ի՞նչ չարժե, օրինակ, Միլլի մեջլիսի պատգամավոր Զահիդ Օրուջեւի ասածը, որ «մշտապես խախտելով հրադադարի ռեժիմը՝ Հայաստանը փորձում է ստիպել, որ Ադրբեջանը անդամակցի ՀԱՊԿ-ին եւ Եվրասիական միությանը»:

Կարծես Հայաստանը հոգս չունի, քնում եւ արթնանում է՝ մտահոգված լինելով, թե Ադրբեջանը ինչո՞ւ չի անդամակցում ՀԱՊԿ-ին: Դե, իսկ Եվրասիական միության մասին Օրուջեւի ասածն առհասարակ բանականությունից էլ դուրս է, քանի որ նման «միություն» դեռեւս գոյություն չունի: Զավեշտը՝ զավեշտ: Բայց ի՞նչն է ստիպել, որ ադրբեջանցի խորհրդարանականն իրեն հիմարի տեղ դնի:

Նրան, ամենայն հավանականությամբ, հանձնարարվել է ասել, որ զինադադարի շփման գծում լարվածությունը «հրահրվել է Ռուսաստանի կողմից», իսկ «քաջարի» Օրուջեւի լեզուն վերջին պահին «փաթ է ընկել» եւ սկսել է անհոդաբաշխ հնչյուններ արտաբերել: Հապա ի՞նչ եք կարծում, հե՞շտ է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի հասցեին նման անպատասխանատու, անհիմն մեղադրանք հնչեցնել: Իհարկե՝ ոչ:

Դրա համար էլ Օրուջեւը ծամածռություններ է անում, թե «պատերազմը ձեռնտու չէ Միացյալ Նահանգներին, Եվրոմիությանը եւ Ադրբեջանին (՞- Վ. Ա.), որովհետեւ այդ դեպքում տարածաշրջանային կայունությունը կվտանգվի, որը բացասաբար կանդրադառնա նրանց նավթային հետաքրքրություններին»: Սա հիմնականում ճիշտ է, եթե, իհարկե, պատերազմ չցանկացող սուբյեկտների շարքից Ադրբեջանը հանվի:

Թե չէ ստացվում է, որ մեկուկես միլիարդ դոլարի նորագույն զենք եւ սպառազինություն գնվում է, որպեսզի իր նստավայրում Իլհամ Ալիեւը ապահով զգա: Եթե այդպես է, ապա ինչո՞ւ է նա ամիսը մեկ պարբերականությամբ հպատակների լուռ բազմությանը «հավաստիացնում, որ ամեն գնով հողերը կազատագրվեն»: Իլհամ Ալիեւը ստախո՞ւն է, խաբո՞ւմ է ժողովրդին:

Կամ մեկն է, կամ՝ մյուսը: Երրորդ տարբերակ գոյություն չունի: Օրուջեւն ինքը բազմիցս «սպառնացել է», «ահազանգել», որ եթե բանակցությունները ցանկալի արդյունքի չբերեն, «Ադրբեջանը պատերազմ կսկսի»: Ի՞նչ է պատահել այդ «խիզախ» մեջլիսականին: Անձամբ նրան ոչինչ էլ չի պատահել: Ուղղակի դիվերսիոն գործողություններն ստացել են արժանի հակահարված, եւ «անպարտելի բանակի» առասպելը հօդս է ցնդել: Մենք չենք ասում, «Զերկալո»-ի լրագրողուհին է վկայում, որ Գերանբոյի շրջանի Թափ-Գարագոյունլու (ի՜նչ էլ անուն են գտել) գյուղի «բնակչության կեսը վերջին օրերին հեռացել է»:

Գուցե վախից է Զահիդ Օրուջեւի լեզուն «փաթ ընկել»: Այդ դեպքում խորհուրդ ենք տալիս, որ մեջլիսականը Բաքվի դրոշի հրապարակում «մնջախաղի թատրոն» բացի: Հեռու չէ օրը, երբ ադրբեջանական հանրությունը նմանների վզակոթին կտա-կհեռացնի իշխանությունից: Իսկ «քյոսա» կոչված ծաղրածուն ադրբեջանական ժողովրդի սիրելին է, մարդիկ նմաններին վերաբերվում են սրտառուչ գթաշարժությամբ: Օրուջեւը հաստատ դրան արժանի է:

**Վ. Ա.**

## ԹԵԺ ԿԵՏ

# Սիրիայում ընդդիմությունը մեծ կորուստներ է կրում

Սիրիայի տարբեր շրջաններում կառավարական զորքերի եւ ապստամբների մարտերի ընթացքում միայն հունիսի 11-ին առնվազն 74 ապստամբ է սպանվել: Այդ մասին հաղորդում են հենց ընդդիմության աղբյուրները: Կառավարական զորքերը շրջապատել են Հաֆե քաղաքը եւ պատրաստվում են գրոհի:

Ընդդիմության տվյալներով, կատաղի մարտեր են ծավալվել Ռաստան եւ Լաթաքիա քաղաքների շրջակայքում:

Երեկ «**Ազգը**» մասնավորապես գրել է, որ ապստամբները եւ նրանց կողմն անցած զինվորականները վերահսկողության տակ են առել օդուժի մի ռազմակայան: Վերջին տեղեկությունների համաձայն, կառավարական զորքերի հակահարձակումից հետո խռովարարները թողել են ռազմակայանը եւ դիմել փախուստի, իրենց հետ վերցնելով հրազեն եւ նռնականետներ: Իսկ զենիթային հրթիռները մնացել են տեղում:

ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ ներկայացուցիչ Կոֆի Անանը երեկ մտահոգություն է հայտնել Սիրիայում շարունակվող արյունահեղության կապակցությամբ: Նա հակամարտ կողմերին կոչ է արել միջոցներ ձեռնարկել խաղաղ բնակչության մեջ զոհեր թույլ չտալու համար:

Syrian Observatory for Human Rights ընդդիմադիր կազմակերպության ներկայացուցիչ Ռամի Աբդ ալ Ռահմանը Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է, որ ընդդիմության մարտիկները ծանր կորուստներ են կրում:

